



gner Yer Toger

ԱԱՐԳԻՍ ԲԱՐՍԱՂԵԱՆ

ՀԱՌԱՋԱՆԵՐ ԵՒ ՇՈՂԵՐ

ՔԵՐԹՈՒԹՅՈՒՆԵՐ

(F. ZUSTRICH)




ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ց. Մ. ՍԵԹԵԱՆ

ԹԱՐԱՎԻ ԱՊՆՈՒ

1936

Setyans



ԱՊՐԵԼԻ ԲԱՐԵՎԱՐԱՆ

ՀԱՌԱՋՆԵՐԻ ԵԿ ՃՈՂԵՐ

ՔԵՐԹՈՒԹՅՈՒՆ


(Բ. ՀԱՏՈՐ)



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. Մ. ՍԵԹԵԱՆ

ԽԱՐԱԳՈՒՆԻ

1936



ՏՊԱՐԱՆ, ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՅՑ


Յ. Մ. Ս Ե Թ Ե Ա Ն

Թիւ 30, Զաբարենքի եօգուցու, կ. Պոլիս

№ 48

ՀԱՌԱՉՆԵՐ

Պատերազմի սարիներէն. յէս պատե-
րազմի.




Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ներկայ հրատարակութիւնս՝ յաւելուած մընէ,
որ նախորդ 1925ի հրատարակութիւնէս դուրս
մնացած գրութիւններ կը կազմեն՝ զորս կանուխ
թուականի գրուած քերթուածներ եւ վերաբ-
ռադրութիւններ են։

Նախորդ հրատարակութիւնս՝ կ'ուզեմ որ,
մինչեւ 1919ի վերջի ժամանակամիջոցը գրաւէ,
որուն սկիզբը՝ 1913 թուականը կը կազմէ։ Մին-
չեւ այդ թուականը գրուած նշանակելի թիւով
եւ արժէքով երգերս կորսուած ըլլալով։

Կեանքին դժնդակ եւ անձեռնու պայման-
ները առնուազն չորս տարի ուշացուցին ներկայ
հատորիս հրատարակութիւնը։

Ս. Բ.



ՕՐԾՐ (*)

Օրօ՞ր մանկիկ, օրօ՞ր օրօ՞ր իմ որդեակ.

Ննջէ՛ անդո՞ր, ո՞հ չես ապրիր գիրգ. խաղա՛ղ,
— «Սիրտս ըլլայ թո՛ղ գորովո՞ւ քեզ մատաղ. —
Ո՞հ, կը մնաս՝ հոգիիդ հետ միս. մինակ. . . .

Եւ կը ճշաս՝ կեանքի հոգէն ահաւո՞ր
Քեզ կը թուին աստղ ու լուսի՛ն լուսածո՞ր
Մահուան կանթեղ՝ կ'ըլլաս ցաւի՛ մեծ գիտակ:
Օրօ՞ր մանկիկ, օրօ՞ր օրօ՞ր իմ որդեակ:

Զի տաք կեանքը քո՞ւն կունենաս մղծաւա՞նջ,
Եւ կեանքին մէջ՝ մեռելներու ծո՛վ հառա'չ
Կուգայ բախի՛լ ողջերուն սիրտն անտնակ:
Մի՛ լար մանկիկ, մի՛ լար մի՛ լար իմ որդեակ:


(*) Հայրական:

Կը ծխա՛յ սիրոս՝ օրօրներուս համրանքով,
Որ չի գտնե՛ս զիս երբ օր մը՝ խոս՞վ...
Կ'ապրիս կարօտս օրօրներէ՛ս պարզունակ:
Օրօ՛ր մանկիկ, օրօ՛ր օրօր իմ որդեակ:

Օրորոցէ՛դ տես մարզարիտ եմ կախե՛ր...
Ա՛ռ անոնցմէ պերճանքի մեծ պատրանքնե՛ր,...
Զի գորո՛վս զոր կը բանամ հոգւոյդ համակ՝
Ցաւի՛, տրտունցի՛ շաղախ մ'է հէքեաթունա՛կ...:
Օրօ՛ր մանկիկ, օրօ՛ր օրօ՛ր իմ որդեակ...:



ՊԱՏԵՐԱՋՄԻ ՏԱՐԻՆԵՐԵՆ.



ՏՊԱԿՈՐՈՒԹԻՒՆ

Արեւո՛ւն հետ, աստղերո՛ւն հետ,
Թախծութիւն մը մահաստուեր,
Արցո՛ւնք, արցո՛ւնք կը քամէր աչքերէ.
Հորիզոնէ հորիզոն՝
Խորշանքնարը կիրքերուն,
Եղերակա՞ն եւ մահուան սարսափներով՝
Խաղաղ երկինքներու տա՛կ
Արհաւի՞րք, արհաւիրք էին ստեղծած:
Հեծեծանքն լքուա՛ծ սէրերուն
— Քնարներու լարեր յարդարող,—
Տառապանքի ատեն անդնդային էին.
Եւ կը յաւերժանա՛ր
Լքուած սէրերուն հեծեծանքն՝
Քաջ զինուորներուն, կարօտաբա՛ղձ,
Նպատակի ծգտող,
Խոնա՛րհ յարկերու տակ,
Բընութեան ծոցը՝ հեզաբարո՛յ

—Միսթիքական եւ վեհափա՞ռ լոռութիւնով,
իր շքեղութեա՞մբը երկնապարզեւ,—
եւ ադամանդի պէ՛ս յստա՞կ երկնքի տակ...:

Խորշակնե՞րը եղերական,
Մահուան սարսափիներով
Հեռաւոր հորիզոններու տակ շղթայազեր-
ծուած՝

Հոգիները տառապանքին էին յանձնած.
Օրէնքներու ցանցին տակ,
Արհաւիրքներու փոթորկին մէջ մրրկանմա՞ն :

Օ՛, արդար եւ բարի կամքերուն
Հաւատո՞քը վսեմ,
Տառապող շրջաններու, սերունդներու,
Ծոցէն ծնող արեգակին պէս՝
Սրբազան իտէալի ի խնդիր,

Ճակատագրական ազնիւ ոգեւորումներու
պահուն՝
Հոգիներուն մէջ կը սերմանէր
Թախծութիւն սուզի նման,
եւ երկունքը, արդարութեան յաղթանա-
կին...:



ՄԻ ԼԱՐ ՀՈԳԵԱԿ

Մի' լար քաղցրիկ, մի' լար հոգեակ,
Սիրոյ արեւն դեռ չէ խաւա՛ր,
Սիրոյ նշի՛յլք անմեղունակ,
Կը ցոլանան հոգիս ի վա՛ր,
Պիտի պահուին եւ անվթա՛ր :

Աշխարհ նոյնիսկ, շրջուի եթէ՛,
Դէպի անդո՛ւնդ թաւագլոր,
Սէրը նորէն պիտի կաթէ,
Քու աչքերէ՛դ արտասուաթո՛ր
Հոգւոյս խորը՝ սիրախաւո՛ր...

Հոգի՛ս, սիրտս արիւնթաթախ՝
Սէր ոգիին մի՛շտ են կարօտ,
Վրէժներու ծոցն ալ անվա՛խ,
Եւ վրէժին, չարիքին մօտ՝
Պիտի զգան սիրո՛յդ քաղցր հոտ . . .

Դ Ժ Գ Ո Լ Ս Է Ր

Կտրի յօ՛ղը ոտքիս՝ երկրէն ,
Ա՛լ ազատուիմ սիրոյ յոյզէն .
Թախծո՛տ, Թախծո՛տ , արահետին
Քայլերս անվերջ անհետի՞ն . . .
Հոգեպարար ո՛ւր հոգեթով՝
Յուշե՞ր , յուշե՞ր կան անվրդով ,
— «Գարնան պաշտամո՛ւնք աներկեւան
Թովչութիւնո՞վ մը անսահման» ,
Տարածութիւնն հեռուներո՛ւ ,
Գաղափար ու հմայքներու .
Զգողութիւնովն աննիւթաէա՞ն
Հոգիիս կ'ըլլան խորան . . . :

Եւ մերթ երթամ ու կորսուիմ,
— «Սրտիս հետ ե՛ս անմտերիմ . . . » —
Երթամ, երթամ, փոշի դառնամ,
Զեփիւռին հետ ընկերանամ.
Երթայ կառչի փոշիիս մասնիկ,
Սիրուհւոյս վրայ՝ որպէս ծաղի՛կ .
Եւ երբոյ, ամէն զինջ առաւօ՛տ,
Զեփիւռին հետ սիրուհւոյս մօտ ,

Շոհէ՛, գգուէ՛ համբոյր առնէ՛,
Վեր երկի՛նքը հոգւոյս ճամբէ՛:

Ահեղ վշտէ՛, անդնդպյի՛ն,
Լեցուած հոգւոյս մէջ մեկին.
Կապանքներէ՛ — կարծես անտես, —
Խորաթափանց, դառնապէ՛ս.
Եւ սիրոյ տարփանքէն՝ ահաշունչ,
Գալարւող եւ ահեղահո՞ւնչ...
Կեանքմ այս, տանիմ յանձնեմ,
— կապանքներէ՛ դառնադէմ —,
Հողին հոգւոյն կենսայո՞րդ,
Ուր կայ խոնա՞ւ հողի որդ:

1915



ԱՆՁԿՈՒԹԻՒՆ

Ճակատագիրս էր,
Հքուած եւ վիրաւո՞ր, նետերէն՝
Գիշերներու ծոցէն հասնող . . .
Եւ ապերասա՞ն :

Ծոցին մէջ բնութեան՝ — մխիթարող
Բարութեամբը խոկացող, —
Հոգիիս թախծութիւնն ազնուական,
Կ'ողողուէ՞ր, մռայլէն,
Չպայծառացած նախազգացումներուս . . . *

Խո՞վքը մտքիս,
Սրտիս հորիզոնները չստուգած,
Եւ կամքիս՝ դարձած անհետախո՞յզ ;
Ճակատագրին երկաթակերտ բազուկներէն՝
Ամեհացած ալիքներու պէ՞ս,
Ափունքներու ընդդիմութիւններէն կը գա-
լարուէին :
Եւ կ'ապրէի անձկութիւններն
Երկինքներու չափ որոտո՞ղ,
Չորս, ցորեկ ատեն,

Մարգերու եւ վազող ջուրերու
Մտերմութեանը հետ կը բաժնէի' ... :

Դիշերներու մէջ՝ կ'իջնէին,
Դիշերներ թափօր առ թափօր:
Եւ կը համակէին զիս՝
Կարօտաքա՛զծ հոգիներու ալիքներն ...
Եւ բաղձանքնե՛ր, երազատի՛պ եւ անօրօ՛ր:



ՄՈՏԱԿՈՐ ԱՆՑԵԱԼԻՆ ԾՈՑԸ (*)

1915 Տարիին

Եղերակա՞ն արծագանգներ՝
— Զարւագուշակ մթութեան պէ՛ս
Հեւասպառ արշալոյսի սպասո՛ղ, —
Հոգիիս մէջ չէին խուժած.
Եւ ճակատագրականութիւնը... կեանքին՝
Բողոքող հոգիիս
Արտասւող խորունկներէն՝
Յոյսին, նորէն արեւուն կը բացուէ՛ր.
Ո՛ր, հետո՞ւն, ծոցը, ապագայիս ընդդիմացող,
Ծոցը մշուշոտ... ժամանակին՝
Յաղթանակին մխիթարութիւնը պիտի ապրէր...
Եւ հետզհետէ՛ ճակատագրիս
Հորիզոններն անստոյգ,
Յոյսելո՞վ նւ պատրանքներով ջահաւորուած՝
Հոգիիս երկնքին՝ դարձան վաղանցուկ հան-
գրաւաններ :

(*) Վերաբարերութիւն:

Եւ երբեմն՝

Եղերական սարսափներով լեցուն,

Դարաւո՞ր գիշերներու ապաւինած՝

Սուրբ օրերու զանգակներն,

Մահազանգի զօղանջներո՞ւ պէ՛ս

Մեր հոգիներուն մէջ արձագանգեցին . . . :

Աւա՛ղ կամք մը, դարերուն եղերաշո՞ւնչ

— Անյայտօրէն անտեսանելի, —

Էռթեանս մէջ կոթողուած՝

Զիս կ'ընտելացնէր

Թախիծին հետ ճակատագրիս՝

Ո՞ր, բնութեան երգերը բոլո՞ր,

Ինծի դամբանականներ թուեցա՞ն :

Եւ երկիրը՝ ներշնչումիս,

Հիացումիս եւ երազներուս օրրա՞ն

Փոթորկա՛ծ էր

Անհաշտ ատելութենէն միածոյլ

Եղբայրաջա՞ն զգացումներու . . .

Հոգի՛ս, այդ միջոցին,

Ապագային համար զլապիրկ՝

Իր անձկութիւններովն անարձագա՞նգ,

Թէ կ'արտասուէր,

Նաեւ՝ յոյսին մխիթարութիւնը կ'ապրէ՞ր :

ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆՍ ՀԵՏ

Ո՞հ, վաղանցուկ տարիներուս, արփագեղ,
Սրտիս մէջ՝ յուսավա՛ռ, մշուշն իր վրան...
Բաղձանքներս մերթ կենդանութիւն կըստանան,
Եւ կը լեցնեն հոգիս խանդով մը լուսեղ :

Ապագայի խռովքներուն հանգուցնո՞ղ,
Եւ ծոցին մէջ, յիշատակի օրերուն՝
Զիս օրբող բաղձանքներուց հետ երազո՞ւն,
Ճանչցա՛յ հոգիս ինքնիր վիշտէն մտրակւող :


Ու նպատակիս չի հանդարտած խռովքներէն,
Եւ մերթ վշտոտ քւ խանդավառ բնազդէս՝
Օրօրումներո՞ւս եւ գնացքիս մէջ վէս,
Զի մտերմացայ՝ գորովով մ'եղբայրօրէն...


Էակներու հայ աւիւնով կենսախայտ,

Որ կարենար սիրտս ըլլար ուկնդի՛ր՝


Անոնց անհո՛ւն յուզումներուն կենսալիր.

Որ չի դառնային, կարօտներս մահապա՛րտ... :






ՅԵՏՊԱՍԵՐԱԳԾԻ



ՀՈԳԻՆ ԻՐ ՈՒԽՏԸ Կ'ԱՊՐԻ



Խրոխտութիւնը ազատածուփ հոգիիս՝
— էութեանս մէջ դարերէ ի վեր խաչակնքած, —
Բանականութեան յաղթանակին կարկառած . . .
Եղբայրական խռովքով՝ տեւողութեան հետ
կ'աղօթէ . . .

Նուիրական իտէալներու եւ գեղեցիկին՝ •
Երկնող գաղափարներու փառքին համար :

Ու մարտնջո՞ղ առաքեալ ոգինե՞ր, հոգիիս մէջէն՝
Փառաւոր համանուագի մը պէս կ'անցնին.
Եւ ժամանակին ընտելացած մտերմութեանս հե՞տ,
Հոգիս՝ սրտիս մասունքներուն հեռաւորութեանն
գիտակցութիւնով,
Իբրեւ աւանդութիւն մը, ոգի՛ մը, լո՞ւռ, դիւ-
ցագնական,

Գաղափարէ զահակիր՝
Պատմական կոթողներու, արծաններու առջեւ՝
— Խորհրդանիշներո՞վ անհուն եւ յաւերժանիստ,
Տառապանքէ անդնդացած իրենց իմաստին մէջ
վեհ,


Հոգիս իլ ուխտը կ'ապրի, մեր կեանքերուն նը.
Ժարովը տիեզերական . . . ,

Եւ խօսքին համար՝ «Գաղափարի սրբութեան
պաշպան»,


— «Արդարութիւն եւ իրաւունքէ զահակի՞ր,»
Ո՞ր դարերու ընթացքին մղձաւանցէ ապրած,
Հոգիս Անոր, այդ խօսքին եւ Գաղափարին
Ապագայ տաճարին համար՝ կ'աղօթէ՝

եւ կը պայքարի . . . :

Բարիզ



ՄԵՐԵԼՈՅԻ ՕՐ ՄԸ



Կը յասնէ՛ գաղափարը, համայնակա՞ն տարա-
ծութեան մը ծոցէն,
Ժամանակէն, միջոցներէն, անդո՛ւնդ, անդո՛ւնդ
ձեւացա՛ծ,

Մը աղաքան կեանքերուն՝ յիշատակներով նուիրա-
կան աշխարհ դարձած
Եւ զգացումներու ճետ՝ դէպիի հոգիին անդունդ-
ները խորացող... *

Զգացումներու թափը՝ ահե՛ղ կերպով փոթոր-
կացա՛ծ,

—Յաւէտ խլուած կեանքերուն յիշատակներէն
մարմին առած—

Պաշտամունքի՛, արարչական կեանքի սրբազան
հետքերուն հետ զոյ՝

Որ կեանքին հե՛տ, յաւէտ յառաջընթաց, հոգի-
ներուն հաղորդ կը դառնայ՝

Հեռաւո՞ր եւ մօտաւոք ու ժամանակազրակա՞ն
միջոցներով . . .

Ո՞ր կարծես՝ խելայեղ եւ լրջախո՞հ, առաքեալ
ոգիներու պէս կը յածի :

Հոգիին դրուագն է, յիշատակը նուիրակա՞ն
կեանքերուն,

Յուշերով լի, կեանքին սրբազան լարերուն հան-
գուցուած,

Կենսաւորուած, տրոփի դարձած այս պահուս
սրտաշա՞րժ,

— Կեանքին համար գերիմա՞ստ, գոյութեան օ-
րէնքը կենդանի, —

Եւ կենսաւորո՞ղ տարերքներու պէս,
Ինչպէս ասղերն մռայլ գիշերներուն մխիթա-
րութիւնն են՝

Յառնա՛ծ տրոփիներով՝ տիեզերքին մէջ կ'ապրի՛ . . .
Որ՝ հոգիներուն յաւերժատե՞ւ պաշտամունքին
խռովքն է :

Յիշա՞տակը նուիրական կեանքերուն՝ ներկայէն
խլուած,

Յաւերժին ծոցը՝ կոթողուա՞ծ կան . . .

* *

Սրբազան կեանքերուն յիշատակն՝ եղերա-
կա՞ն եւ առեղծուածային,

Հոգիներուն մռայլ աշխարհներուն ապ-
րումներուն պէս՝

Ներկային մէջ, կեանքին լարած բիւրաւո՛ր
հանգոյցներէն դո՛ւրս,

Պե՛րմ եւ շքեղօրէն հիացումի՛ տարափներով
կը յայտնուին :

Օ՛, խորախորունկ ցա՛ւը ժամանակակից սե-
մէն անդին...

Յիշատակուած կեանքին,—ներկայէն հեռո՛ւ
թողուա՛ծ,—

Անդրշիրիմեան խորշերէն բխած, որ տրոփ-
նէ, կենսաւորութիւնն

Հոգիներու աշխարհին, ո՛ւր արցունքի վը-
ճիտ կաթիլներն՝ կը լճանա՞ն

Նուիրական կեանքերու՝ յիշատակներո՛վ,
պերճիմա՛ստ ակունքներուն...

1931

Կ Ա Ր Ո Տ


Աւերակին մէջ հոգիիս անսահման ,
Ե'ս , տպշահար կը թափառիմ սրտացաւ .
Եւ սրտագին , կ'երազեմ , ազատութեան
Արեւի մը՝ ո'ր հոգիս զայն չի ճանչցաւ :

Անհուն իղձով կ'երազեմ , զերթ ուխտաւոր
Արեւելեան մեհեաններու ծնրադիր՝
Մաքրամաքո՞ւր երկիրներու կապրածոր՝,
Անեղծ աստղ մը որ ինձ ըլլայ ունկնդիր...

Եւ կ'երածեմ՝ հառաչանքով անորտունց ,
Վարդ օրերուն թարշամ տեսքէն դողահար ,
Նոր յոյսերու , նոր կեանքի մը զերաշունչ ,
Ծաղկած մեր հին տանիքներուն տակ եր-
ջանի՛կ :



center



Գ Ի Շ Ե Բ Ա Խ Ա Ն Պ Ա Հ Մ Ը

Լոյսի հեղեղ մ'լուսնկայի կը թափի՛,
Տարածութեան վրայ մեր երկրին հընամենի ,
Երկնքէ մը ուր աստղերը անհունին մէջ հատ,
հատ կը մարմրի՛ն .

Արծաթելով քաղաքն ամբողջ ,
Հեռուն փոռուած բլրակներն ու սարահարթներ :
Զիւնի ծածկ մը համատարած եւ միօրինակ ,
Քաղաքին շքեղութիւնը պայծառացած կը շեշ-
տէի՛ն :

Եւ սփոռուած ձիւնէն՝
Լայն ընդարձակ գետնի մը վրայ
Արահետներ երկարածիկ , խաչածեւող ,
Տեղ, տեղ ձիւնէն պարսպաւորուած էին ...

Ուր միոքը մարդկային
Հոն ապրած կեանքին օրհնութիւնը կը նուազէ՛ք
Ու բընութեան այս պահերուն մէջ լուսաշող :
Խորունկ հրճուանք մը խաղաղութեան իտէալա-
տիալ .


Հեթանոս խորհուրդը պաշտելի ,
Հոգիներուն՝
Ու երազանքի հմայքներուն բացուած
Մըտքերուն մէջ կը լեցուի՛ :

Ս Բ Տ Ծ Կ Ա Հ Ե Ց

Հայրենցկն Միութիւններուն

Երկինքներու տակ հիւրընկա՞լ,
Շրջապատուած յօրինուածքներով հոյակապ.
Ուր հայրենաբաղծ երազները մեր,
Տժգունող մշուշներ կը յայտնուին՝
Խոյանքը ճիզերուս
Նըպատակիս սպասարկո՞ւ,
Կ'ըլլայ անարգասաւո՞ր :
Նպատակս է աւանդութիւններուս սրբազան
Եւ անցեալիս պաշտամունքը ապրիլ:
Եւ մերթ անցեալիս յուսալից
Դեռ կենսուրախ օրերուս երազա՞նքը ապրելով
Շքեղութիւններն այդ բազմազեղ
Սրտիս առջեւ ցնորատեսիլ անդունդի պէս
զգացի ,
Եւ մեր ծննդավայրերուն հայրենի ,
Մտածումը երջանկաբե՞ր ,
Աւանդութիւններուս մտերմութեանը հետ՝
Հոգւոյս մէջ՝ խնդութիւն կը թափեն . . . :

ՈԳԻՆԵՐՈՒ ՀԵՔԵԱԹԱՅԻՆ ՎԱՅՐ
ՀՕՐՈ ՍՐԲԱԾԵՂԻՆ



Եղեմաբո՞յր սարալանջ եւ սրբատեղի,
Ոզիներու անգի՞ր պատմութիւն,
Ուր մտերիմներդ՝
Թիթեռնիկներու պէս քաղցրութիւն,
Ու թարմութիւնը որոնող,
Անջրպետէ անջրպետ, հոգի է հոգի թա-
փանցող . . .

Սրբատեղւոյդ դրացի
Առապար լանջքիդ վրայ, արեւահա՛ր;
Տարածուելով՝ կը հմայուին . . . :

Օ՛, Աստուածալուր, միսթիիակա՛ն տարա-
ծութիւն . . . :

Անկէ հեռո՛ւ,
Լեռնաշղթայէ զգլխիչ,
Հէքեաթային անգի՞ր ոզիներով լի՞;
Մանուկ հոգիներուն համար անանցանելի,
Եւ ուխտաւորներու նայուածքին դիմաց՝
Արեւուն շողերէն վէտվէտո՞ւն,

Սպունգինման ոսկեզօծւո՞ղ եւ ստուերա-
յին...:

Լեանջքիդ վրայ. . .

Արեւակէ՞զ եւ կանաչորակ,

Կը քամեն աչքերը, քարց բոյսերն՝

Ո՞ր իբրեւ մասնիկներն են

Հէքեաթային ոգիներուե՝ եւ անոնց վերըն-
ձիւղմա՞ն :

Լեռան կատարէն անդին տարածւող

Ազատանի՞ստ շղթայաւորումէ.

Ո՞ւր ձորերու մէջ

Պարզութիւններ մարդկային՝

Յիշողութենէ՛ յիշողութիւն կը պատմուին.

Յիշողութեան համար անքակտելի՛,

Զորս տարիներու անջրապետին ծոցէ՛ն՝

Մտերմութեամբ կ'երեւի՞ն:

○

Հոն ոչխարներու հօ'տը

Բոյր մը անցնցելի կ'արձակէ՛. . .

Ա'յն տեղ, ասաղերով զարդարուած երկնքի-

տակ,

Բընութեան եւ արեւուն

Փառքը կը յայտնուին,

Միսթիքական սարսուաններով. . . :

Ա Բ Հ Ա Խ Ո Ւ Թ Ե Ա Ն Զ Ա Յ Ն

Հայրենի հարազատ աշխարհին

Ուղիորէն կ'ելեն վեր,
Միջոցին մէջ ահեղաշաչ ճարճատո՞ղ...
Սրտիս խորունկ կեա՞նքն ու կոտտանք
— Հոգիին մէջ վե՞հ ու վսե՞մ չարչարանք.—
Ո՞ր լուսասփիւռ արփաւ էտ շողի,
Արծագանգի կը տենչան... յաւերժատե՛ւ :
Դարաւոր խօ՞սքը
Նկրումներով վե՞հ,
Յաւերժապա՞շտ ձգումներով ,
Զգեցած մղծաւանջն նժդեհ կամքի ,
Դառկաղէ՛տ ճակատագրականութիւններ ու
կը բախի՛ ,

Հանգիտութիւնով ամպերուն
Կրքոտ գիրկընդիւառնումեն՝ գոյացած
Հրաբորքո՛ք կայծակին .

Սրտիս խորունկ կեա՞նք եւ կոտտանք ,
Հի՞ն կեանքերէն ,
Առհաւութեան տրոփոշ հետքերէն համակ-
ուած .

Պատմութեան հանգոյցներուն ,
Էցերուն պէս բարձրակարկա՛ռ՝

Կեանքի սեմին, սալին վրայ կը ծայնէ.
Կ'ապրի չարչարանք, կը խռկայ
—Ազատագո՛ռ խօսք— «—Իրաւոնքի խոր-
հրդանիշ .—»

Հոգիին մթագի՛ն խորշերուն արփաւէտու-
թեանը անունով... :

Վե՞հ ու վսեմ չարչարա՛նք, առհաւու-
թեան կայծն՝,—

Գաղափարի պէս աններկիւղ
Դարաւո՛ր նժարը... հոգիին:

Դարաւոր տառապանքի ծնունդ.

Որ՝ կեանքի դրուագներուն, ապրումներուն
համազօր՝

Գոյութեան գերագոյն աղաղակէ:

Արդարութեան տենչա՛նք մը,
Եւ զգացում մը դարաւո՛ր,
Արեւուն շողին պէ՛ս անբաօսիր,
Եւ կոչուած բարիքի։
Կ'ուզէ՛ շողալ, դառնալ խօսք, դառնալ մար-
մին՝

Կեանքին լայնածիր ափերուն վրայ դարա-
ւո՛ր.

Դառնալ խօ՛սք, դառնալ Մարմին՝
Արդարութեան համար արտասւող մարդուն
Կոած օրէնքներո՛ւն
Դատապարտութիւններէ՛ն վեր...:

Որուն ողբէն՝

Դարձաւ հոգին խոհո՞ւն եւ մելամաղծոտ,
Հոգիին աշխարհը դարձաւ ունայն եւ դառ-
նաղէտ....

Ո՞հ, առհաւուղէց պաշտամունք, ո՞ր
Հոգիին համակ տարողութիւնն ունի կա-
շըմբուռն,

Ալիք մըն է կարծես,
Միջոցին մէկ ճարճատո՞ւն, եւ ահեղազոռ,
Արդարութեան պէս մոգակա՞ն եւ ահեղա-
սաստ՝

Կ'իջնէ հոգիիս յատա'կ
Արփատենչ պսակաւորումի մը համար յաղ-
թական՝

Վե՛հ եւ աներկբայելի օրէնքներո՞վ:

1934



ՀԻԱՍԹԱՓՈՒԹԻՒՆ

Երանութիւնն ,
Նպատակի ափունքներուն ,
Որ կը ճաշակուի թափովն՝
Պայքարներու եւ ճիգերու ,
Պիտի կրնան արգասաւորուիլ՝
Գիրկն աւանդական անցեալին .
Որուն յաւիտենական տրամաբանութեանն
գիտակցութիւնով
Հոգին , հոգին կ'աղաղակէ...

Յիշողութեանս կը փարի՛մ ,
Հոգիիս սրբազան պատուանդանները լու-
սաւորող .
Եւ ե'տ կը դառնամ . . .

— «Ուխտաւորի՛ հաւատքիս ,
Սրբութիւններու հաւատքին պատրանքովն
— «Հին օրերուն՝ երբ կամքս

Հրդեհուած,
Ցաւին գիտակցութիւնով
Խոչալներու մարդկային ,
Աղօթքին կը յուսար... .

«—Հարազատներու շունչին քով՝
Որոնց գաղափարն
Մտածումս կը տառապեցնէ՞ր...
Եւ երազներու Աստուածավայել
Եղբայրութեան շքեղ յոյսով՝
Անյայտ ցաւին կ'առաջնորդէ՞ր... .

«— Այն օրերուն՝
Ե՛րբ կը համբուրէի,
Մեր ճակատագրին եղերակա՞ն օրերուն ,
Ցաւոտ եւ եղբայրական հոգիներու
Խոյանքնե՞րն ազնուական .—


— «Երբ կը մտածէի՞ ,
Ազատութեա՞ն—խրո՛խտ հոգիով, —
Որ ցաւի՞ , խորունկ հնհնուքներու ապաս-
տա՞ն պիտի ըլլա՞ր :

— «Երբ կը մտածէի՞ ,
Եղբայրութեան աղօթող յաղթանակի՞ն հո-
գիիս . •

Արդարութեան կարկառող
Անսահմա՞ն պայքարներէ յետոյ՝
Ցաւի՞ , եւ զղջումի՞ , բողոքի ահաւոր թա-
փով ,

Աստղերով պատրանքուած երկնքի տակ ,
Նպատակի եւ վերսկսւող ապագայի եր-
կունքո՞վ ,

Պատմութեան վրա'յ արտասւող հոգիո՞վ . . . » •



ՅՈՅՍԵ ԿԸ ՀԵՂԵՆԵՐ

Դիռ վաղորդայնին՝
Մուս'յլ, մռամ'յլ, տժգոյն օրերուն
Պատերազմի տարիներուն, արհաւրալից եւ^{շղթայազերծուած},
Էռթիւններէն ներս,
Յո՛յսը կը հեղեղէ՞ր թեւատարած եւ արե-
ւափայլ :

Մոա'յլ մը — դրոշմը եւ պատգամը պատե-
րազմին, —
Անդունդէ մը համատարած...
— Կշտոտ ու տառապող իրականութիւն-
ներէն, —

Սեւեռաղ յստակ հորիզոններու՝
Կըսփոփուէր եւ կ'եթերանա՞ր...

Մղծաւանջը ամբոխներուն,
Լծուած աշխատանքին մարմնական,
Լծուած մտքի աշխատանքին,
Պատերազմին գոռ, տառապազին եւ մա-
հաքի՞ր օրերուն,
Եւ համատարած հորիզոններով,
Իքրեւ հարկը պատերազմին,
Մեղմանալով կ'անգայտանա՞ր :

Վիրոտ հոգիները կ'սպիանայի՞ն :
Ամբոխները, շրջանին հակատագրին յանձ-
նուած
Պիտի ողջագուրուէին խաղաղութենէ՞ն...
Տառապանքը հոգիին մէջ խոր, խոր բոյն
դրած՝

Փոթորկի եւ մրցեկի մը հանգոյն,
—Պատերազմին կամքէն ստեղծուած,—
Բարզաւած ու ամաչի
Քաղաքի մը կուրծքին վրայ յայտնւող,
Կ'անյայտանար համրաբա՛ր...:

Ամբոխնե՛րը, կալանաւոր
Եւ շղթայուա՛ծ զինւորական օրէնքներէն.
Նորափթիթ երեւոյթ մը կը պարզէին.
Եւ թեւեր կը տարածէին
Դէպի հոգեպարար, զո՞վ միջոցներ,
Հեռանկարներով, կ'արծես արեւոտ եւ դիւ-
թիչ,
Մինչեւ խաղա՛ղ կեանքի մը անյեղլիու-
թիւնը,
Ո՛ր, տառապանքին եւ վրդովանքներուն
դէմ պատերազմին
Յաղթանա՛կ մը պիտի կազմէ՛ր:

Եւ իտէալներ կը յայտնուէին նորանոր,
Իտէալներ կերտիչ, շինարարութեան յու-
սադրութիւնով,

Կեանքը՝ կերտիչ,
Եւ վերահատատիչ խաղա՛ղ բոյներու,
Անդորրութիւնով մը դարաւո՛ր,
Եւ բարօրութեան խաղաղաւէ՛տ ծգտումով,
Սրտագրաւ հեռանկար կըստանա՛ր...:

ՅԱՀԱՆԴԱԿԱՆ ԹԻՒԻՆ

ՕՐՈՒ

7

Պատերազմի տարիներին

Տպաւորութիւն	11
Մի լար հոգեակ	13
Դժգոհ սէր	14
Անձկութիւն	16
Մօտաւոր անցեալին ծոցը	18
Յիշողութեանս հետ	20

Եետ պատերազմի


Հոգիս իր ուխտը կ'ապրի	25
Մեռելոցի օր մը	29
Կարօտ	34


Շողեր

Դիշերուան պահ մը	37
Սրտիս հետ	38
Ոգիներու հէքեաթային վայր	39
Առհաւութեան ձայն	43
Հիասթափութիւն	46
Յոյսը կը հեղեղէր	49

ՎՐԻՊԱԿ

Էջ	Տող	Մխալ	Ուղիղ
7	2 րդ	անդոր	անդորր
19	18 »	եղբայրաջան	եղբայրական
27	8 »	մարտնչող	մարտնչող
28	4 »	պաշտան	պաշտպան
34	9 »	կ'երածեմ	կ'երազեմ
31	1 »	յասնի	յառնէ
42	23 »	սարսուաններով	սարսուռներով
43	14 »	գիրկընդիսառնումին	գիրկընդիսառ- նումէն







İBB Eyüp Sultan Halk ve Çocuk Kütüphanesi



ERM0458

255.07.02.01.06.00/

